թեամբ, որոշեց հայ–անգլիական ուժերով գրաւել Կարսը: Կարսի զինուրական նահանգապետ կարգուեց գնդ. Թեմբըրլէյը, ապր. 12–ին քաղաքացիական նահանգապետ նշանակուեց Ստ. Ղորղանեանը և հայկական գրաւող զօրամասի պետ՝ զօր. Յովսէփեանը: Հայ և անգլիական զօրքերը, երկաթուղով ու խճուղիով շարժուեցին առաջ և, առանց դիմադրութեան հանդիպելու, ապր. 24–ին, մտան Կարս: Շուրան, Շիւքրի փաշայի դրդումով, փորձեց հակառակութիւն ցոյց տալ, բայց անգլիացիք ձերբակալեցին Շուրայի անդամներին և ուրիշ աչքի ընկնող թուրքերին, մօտ 150 հոգի, և արտակարգ գնացքով ուղարկեցին Մալթա կղզին: Շիւքրի փաշան յաջողեց փախչել:

Առաջին օրերը, իշխանութիւնը և քաղաքի ու բերդի պահակութիւնը անում էին անգլիական զինուորները. ապր. 28–ին իշխանութիւնն ամբողջապէս փոխանցուեց հայերին. անգլիական զինուորներին փոխարինեցին հայերը. բերդապետ նշանակուեց փոխ–գնդ. Մատվէյևը:

Մայիս 2–ին հայերի ձեռքն անցաւ Արփաչայ—Սարըղամիշ երկաթուղին, և մայիս 4–ից սկսուեց կանոնաւոր երթևեկութիւնը:

Մայիս 9–ին հայկական զօրքերը գրաւեցին Մերդենեկը, մայիս 13–ին, առանց կուի, մտան Օլթի և Կաղզուան: Քրդերն ու թուրքերը ընդունեցին նրանց աղ ու հացով:

Մայիս 10–ին Կարս հասան և մեծ հանդիսաւորութեամբ ընդունեցին վարչապետ Ալեքսանդրապոլեանը և զօր. Դևին: Մայիս 11–ին համաժողովրդական մաղթանք եղաւ պատմական Առաքելոց եկեղեցում, ուր Ալեքսանդրապոլեանն իր ճառում յայտարարեց. «Մինչև մայիս 15 մեր զօրքերը պէտք է գրաւեն Ալաշկերտի հովիտը և Բասէնը»:

Եւ, յիրաւի, հայ ժողովրդի հայեացքը յառած էր ա՛յն կողմ: Այդ ուղղութեամբ էր շարժւում և դաղթականութիւնը:

Նոյն ձևով, առանց մի՛ջադէպի, տեղի ունեցաւ և Նախիջևանի գրաւումը: Ապր. 9–ին, կառավարութիւնը որոշեց Շարուր–Նախիջևանի վարչական ձևը. չրջանը պիտի բաժանուէր 3 գաւառի. 1) Գողթան՝ կենտրոնը Ագուլիս, 2) Նախիջևան՝ Նախիջևան քաղաքը, և 3) Շարուր՝ Բաշ–Նորաշէն: Մայիս 3–ին Նախիջևանի ընդհանուր նահանգապետ նշանակուեց իրաւաբան Գէորգ Վարշամեանը և գրաւող զօրքերի հրամանատար՝ Երևանի զօրամասի պետ Դրօն: Գրաւման ծրագիրը կազմուեց զօր. Դևիի, զօր. Հախվերդեանի և Դրօի կողմից:

Նոյն օրը, մայիս 3–ին, հրատարակուեց զօր. Դևիի և Դրօի ստորագրութեամբ մի հրաման՝ ուղղուած Նախիջևանի ազգաբնակութեան, որով Նախիջևանը յայտարարւում էր կցուած Հայաստանին, պարտք էր դրւում ժողովրդի վրա՝ ապրել խաղաղ ու համերաշխ և կառավարութեան կողմից խոստացւում էր օրէնքի յարգանք ու հաւասար վերաբերում դէպի բոլոր բնակիչները՝ առանց ցեղի և կրօնի խորութեան:

Այսպէս, հայկական զօրքերը ճանապարհ ընկան և մի քանի օրից արդէն Դաւալուում էին, ուր դուան խանդավառ ընդունելութիւն: Զօրքին դիմա–